



## **Կարգապահական գործ թիվ ԿԳ-19072**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2019 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 272-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ԹԻՎ ԿԳ/159-Ա**

### **ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԴԱ ՀԱԿՈՔՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅՈՒ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի և Հարություն Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Գ. Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Լիդա Հակոբյանին (արտոնագիր թիվ 1038) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

### **Պ Ա Ր Ձ Ե Ց՝**

#### **1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

Քաղաքացի Գուլիգար Շավեշտյանը (**այսուհետ, նաև՝ Դիմող**) դիմելով Պալատ հայտնել է, որ 2017 թվականին գնել է սեփականաշնորհված տուն՝ իր հողամասով, իսկ այդ տարածքում առկա է նաև գոմ, որին հավակնում է հարևանը, ուստի հարցին օրինական լուծում տալու համար դիմել է փաստաբան Լիդա Հակոբյանին և վճարել՝ ընդհանուր 500.000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Դիմողը նաև հայտնել է, որ Լիդա Հակոբյանը որևէ փաստաբանական ծառայություն չի մատուցել, ուստի փաստաբանի հետ կնքված պայմանագիրը լուծվել է և, վերջինս պարտավորվել է վերադարձնել 450.000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, սակայն հրաժարվում է այդ գումարը վերադարձնել:

Դիմումին կից ներկայացվել է «Համալի գրուպ» ՍՊԸ-ին կատարված վճարման վերաբերյալ անդորրագրի, վարկի մարման գրաֆիկի և կանխիկ գումարի ստացման տեղեկանքի պատճենները:

#### **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի  
**26 նոյեմբերի 2019թ.**  
**թիվ ԿԳ/159-Ա**

կողմից 11.04.2019թ. թիվ 146-Ա/ԿԳ-19072 որոշմամբ (**այսուհետ նաև՝ Որոշում**)՝ փաստաբան Լիդա Հակոբյանի (արտոնագիր թիվ 1038) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 2.7.2, 3.1.8, 3.5.5, 3.6.1 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

15.04.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռիմա Մխիթարյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

### **3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

#### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.**

12.11.2019 թվականի Խորհրդի նիստին Դիմողը ներկայացել ըստ էության հաստատել է դիմումով արտահայտված դիրքորոշումը:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր 26.11.2019 թվականի կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

#### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը.**

Պատասխանողը նախապատրաստողին ներկայացրել է բացատրություն, որով, ներկայացնելով իր կողմից մատուցված ծառայությունների ծավալը, ըստ էության հայտնել է, որ չի հրաժարվում գումարի մի մասը՝ 200.000 ՀՀ դրամը վերադարձնելուց, սակայն Դիմողը պահանջել է վերադարձնել ամբողջ գումարը, բացի այդ, անձամբ չի այցելել գրասենյակ:

#### **3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

### **4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.**

06.06.2019թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձը կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի Խորհրդին է հանձնվել 19.06.2019 թվականին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 12.11.2019թ. ժամը 19:15-ին և 26.11.2019թ. ժամը 18:15-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապարաստրոֆի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

**խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապարաստրոֆի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝**

1) Դիմողի և «Համալի» ՍՊ ընկերության տնօրեն Լիդա Հակոբյանի միջև 26.06.2018 թվականին կնքվել է փաստաբանական ծառայություն մատուցելու վերաբերյալ պայմանագիր՝ ինքնակամ կառույցը սեփականության իրավունքով պատկանող հողամասից ապամոնտաժելու պահանջի վերաբերյալ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան դիմելու և որպես հայցվորի ներկայացուցիչ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված և նույն հանձնարարության հետ կապված բոլոր գործողությունները կատարելու վերաբերյալ:

*Նշված փաստը հաստատվում է Դիմողի կողմից ներկայացված դիմումով, Պայմանագրով, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:*

2) Դիմողի և «Համալի» ՍՊ ընկերության տնօրեն Լիդա Հակոբյանի միջև 26.06.2018 թվականին կնքված պայմանագիրը լուծվել է:

*Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի կողմից Դիմողին ներկայացված գրությամբ, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:*

3) Փաստաբան Լիդա Հակոբյանը չի հրաժարվում գումարի մի մասը՝ 200.000 ՀՀ դրամը վերադարձնելուց:

*Նշված փաստը հաստատվում է Պատասխանողի բացատրությամբ:*

## **6. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն Լիդա Հակոբյանը փաստաբանական գործունեության արտոնագիրը ստացել է 16.10.2010թ.: 2015-2019թթ ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 3 անգամ (3 ավարտված վարույթ), չհաշված սույն կարգապահական գործը: Ավարտված կարգապահական վարույթներից մեկով փաստաբան Լիդա Հակոբյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Կանոնագրքի 6.1, 2.7.2, 3.1.8, 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթով Պատասխանողը խորհրդի 06.03.2018 թվականի թիվ ԿԳ/45-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նկատողության ձևով և լրացուցիչ

վերապատրաստման դասերի մասնակցություն 4 ժամ ժամաքանակով: Հիմնական տույժը մարված է, իսկ լրացուցիչը՝ ոչ:

### **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

**Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լիդա Հակոբյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 3.8.5 ենթակետի պահանջների խախտման համար, իսկ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

**7.1. Խորհրդի պատճառաբանությունը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 3.8.5 ենթակետի խախտման մասով.**

**«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է՝ պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:**

**Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:**

**Կանոնագրքի 3.8.5 ենթակետի համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ 1) վստահորդին կամ պարզաբանին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ, 2) վերադարձնել հանձնարարության կատարման հետ կապված ծախսերի հատուցման համար նախատեսված և չծախսված միջոցները, 3) վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):**

Կանոնագրքի 3.8.5 ենթակետով սահմանված պարտականությունը փաստաբանի բարեխիղճ մասնագիտական վարքագծի բաղադրիչներից է: Այն ներառում է վստահորդի հետ պայմանագիրը լուծելիս փաստաբանի կողմից կատարվելիք անհրաժեշտ գործողությունները՝ հոնորարի այն մասի վերադարձը, որի դիմաց փաստացի ծառայություն չի մատուցվել, հանձնարարության կատարման համար վստահորդից գանձված, սակայն չծախսված միջոցների վերադարձը և վստահորդի հանձնարարության հետ կապված փաստաթղթերի հանձնումը կամ վերադարձը վստահորդին:

Սույն պարագայում դիմումում նշված հանգամանքները վերաբերում են Կանոնագրքի 3.8.5 ենթակետի 1-ին պարբերությանը, այն է՝ փաստացի աշխատանք կատարված չլինելու պայմաններում հոնորարի համապատասխան մասը չվերադարձնելուն:

Սույն գործի շրջանակներում Դիմողը հայտնել է, որ Լիդա Հակոբյանը որևէ փաստաբանական ծառայություն չի մատուցել, ուստի փաստաբանի հետ կնքված

պայմանագիրը լուծվել է և, վերջինս պարտավորվել է վերադարձնել 450.000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, սակայն հրաժարվում է այդ գումարը վերադարձնել: Միննույն ժամանակ, ներկայացված բացատրությամբ Պատասխանողն ըստ էության հայտնել է, որ չի հրաժարվում վերադարձնել գումարի մի մասը՝ 200.000 ՀՀ դրամը: Ընդ որում, Դիմողի հետ կնքված պայմանագիրը լուծվել է, որպիսի հանգամանքը չի ժխտել նաև Պատասխանողը:

Նման պայմայններում Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը, հայտնելով պատրաստակամություն պայմանագրով սահմանված գումարի մի մասը վերադարձնելու հարցում, փաստորեն ընդունել է պայմանագիրը լուծելիս իր կողմից չկատարված աշխատանքի դիմաց հոնորարի մի մասը վերադարձրած չլինելու հանգամանքը:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լիդա Հակոբյանը թույլ է տվել Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 3.8.5 (1) ենթակետերի խախտում, ինչի համար ենթակա է կարգապահական պատասխանատվության:

## **7.2. Խորհրդի պատճառաբանությունը Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 ենթակետերի խախտման մասով.**

**«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է՝ փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխիղճորեն պաշտպանել վստահողի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով**

**Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահողի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:**

**Կանոնագրքի 3.1.8 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:**

**Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահողին և հանդես գալ նրա անունից:**

Վերլուծելով նշված կանոնները Պալատի խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Համադրելով Կանոնագրքի նշված ենթակետերը Պալատի Խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխիղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահողի նպաստավոր շահերից և

բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին, պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխղճության ապացույց: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Դիմողն, ըստ էության, հայտնել է, որ դիմել է փաստաբան Լիդա Հակոբյանին իր կողմից 2017թ. գնված տան հողամասում առկա գոմի հարցին օրինական լուծում տալու համար, քանի որ նշված գոմին հավակնել է հարևանը, սակայն փաստաբանը որևէ փաստաբանական ծառայություն չի մատուցել: Մինչդեռ, պատասխանողը նշված հանգամանքը չի ընդունել:

Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում չեն ներկայացվել այնպիսի ապացույցներ, որոնցով կհաստատվեր Պատասխանողի կողմից Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 ենթակետերի ենթակետի խախտում թույլ տալու հանգամանքը:

Ուստի՝ Խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի 2.6.1 ենթակետի խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

#### ***Կարգապահական տույժի ընդհանրությունը.***

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը, համաչափության հիմնարար սկզբունքը, ինչպես նաև փաստաբան Լիդա Հակոբյանի անձը բնութագրող հանգամանքները:

Սույն պարագայում փաստաբանին կարգապահական տույժին ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համաչափությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշների կիրառելիս փաստաբանի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և փաստաբանի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը՝....1) նկատողություն:

Պալատի Խորհուրդը, հաշվի առնելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, այդ թվում՝ կատարված խախտման բնույթը և փաստաբանի անձը, գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ պետք է կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով Խորհուրդը՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

**1. Փաստաբան Լիդա Հակոբյանին (արտոնագիր 1038) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 3.8.5(1) ենթակետի խախտման համար:**

**2. Փաստաբան Լիդա Հակոբյանի (արտոնագիր 1038) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:**

**3. Պալատի նախագահի 11.04.2019թ. թիվ 146-Ա/ԿԳ-19072 որոշմամբ փաստաբան Լիդա Հակոբյանի (արտոնագիր 1038) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի և Կանոնագրքի 2.7.2, 3.1.8, 3.5.5 ենթակետերի մասով կարճել:**

**4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Լիդա Հակոբյանին և Դիմողին:**

*Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստա.նալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Հարություն Հարությունյան

**26 նոյեմբերի 2019թ.  
թիվ ԿԳ/159-Ա  
ք. Երևան**